



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 11/20**

22.09.2020թ.

ք. Երևան

«Հայէկոնոմբանկ» ԲԲ ընկերությունը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան (այսուհետ՝ Սահմանադրական դատարան) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի և «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը (այսուհետ՝ Սահմանադրություն) համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի և «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին և 63-րդ հոդվածի 1-ին մասերին:

Դիմողը դիմում է ներկայացրել ՀՀ Լոռու մարզի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարան՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի (այսուհետ նաև՝ Հաշտարար) 17.04.2019թ. թիվ 15-2002/19 որոշումը չեղյալ ճանաչելու պահանջի մասին: Դիմողի և Հաշտարարի միջև չի գործել Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր:

09.10.2019թ. ՀՀ Լոռու մարզի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է Հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու մասին որոշում (այսուհետ՝ Դատարանի որոշում):

Նշված գործով կողմը և Հաշտարարը Դատարանի որոշման դեմ ներկայացրել են վերաքննիչ բողոքներ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 26.12.2019թ. կայացրել է վերաքննիչ բողոքները բավարարելու մասին որոշում, որով Դիմողի նկատմամբ կիրառվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասը, «Ֆինանսական

համակարգի հաշտարարի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը և նույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը: Համաձայն նշված որոշման՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կարող է չեղյալ ճանաչվել միայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից որևէ մեկով:

Դիմողը վերաքննիչ դատարանի որոշման դեմ ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի վարույթ ընդունումը 26.02.2020թ. որոշմամբ մերժվել է:

Ըստ Դիմողի, իր նկատմամբ կիրառված և վիճարկվող նորմերի մեկնաբանությունը հանգում է նրան, որ վերջինս Հաշտարարի որոշումը կարող է վիճարկել քաղաքացիաիրավական դատավարության կարգով, սակայն միայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքով սահմանված շրջանակներում, իսկ այն հանգամանքը, որ Դիմողը չի հրաժարվել Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, որևէ իրավական նշանակություն չունի: Դիմողը, չունենալով դատարանից բացի որևէ այլընտրանք, զրկվել է դատարանում իր գործի արդարացի և արդյունավետ դատական պաշտպանություն ստանալու սահմանադրական իրավունքից:

Ըստ Դիմողի, դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման լիարժեք երաշխավորումն անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու առաջնահերթ իրավական նախապայմաններից է: Ի թիվս այլնի, այդ հանգամանքով է պայմանավորված վեճի առարկա իրավակարգավորման սահմանադրականությունը հատկապես դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում գնահատելը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի և «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին:

Վիճարկվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի բովանդակությունը հետևյալն է.

5. Դատարանը դիմումի քննության ժամանակ պարզում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը:

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կողմերը կարող են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վիճարկել իրավասու դատարան ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Այսպես, Սահմանադրության 74-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

Սահմանադրության 61-րդ հոդվածի և 63-րդ հոդվածի սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի թիվ ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի թիվ ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում: Նշված որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»

Եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է: Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում:

Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՄԴՈ-719 որոշման մեջ նշել է «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ

մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1-ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեզիտիմ ակնկալիքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը դիմումի քննության ժամանակ պարզում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու՝ «Ֆինանսական համակարգի

հաշտարարի մասին» օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը: Իսկ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի 17-րդ հոդվածով սպառիչ թվարկված են այն հիմքերը, որոնց հիման վրա Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները կարող են չեղյալ ճանաչվել: Այդպիսի հիմքերը 3-ն են՝

- 1) պահանջը ենթակա չէ քննության Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից.
- 2) Ֆինանսական համակարգի հաշտարարը որոշում է կայացրել սույն օրենքով սահմանված ընթացակարգային կանոնների պահանջների խախտմամբ.
- 3) բացահայտվել են Ֆինանսական համակարգի հաշտարարի անաչառությունը բացառող հանգամանքներ:

Այսինքն, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի հիմքով կողմերի միջև համապատասխան համաձայնագրի բացակայության դեպքում ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կարող է չեղյալ ճանաչվել միայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով, և ոչ թե Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման իրավաչափության ըստ էության քննության աղյուսքում:

Անդրադառնալով Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները դատական կարգով վիճարկելու հիմքերի սահմանափակմանը՝ Սահմանադրական դատարանը 2012 թվականի հոկտեմբերի 09-ի թիվ ՍԴՌ-1051 որոշմամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը. «8. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերոհիշյալ հարցով «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի իրավակարգավորումներն ուղղակի նախատեսում են Հաճախորդի ազատ կամահայտնությունը: Օրենքում առկա չէ որևէ դրույթ, որն ուղղակիորեն կվերաբերի Հաշտարարի որոշումը Կազմակերպության կողմից «հատուկ ընդունելուն», սակայն օրենքը նախատեսում է դրույթ, համաձայն որի՝ Կազմակերպությունը կարող է Հաշտարարի գրասենյակի հետ կնքել գրավոր համաձայնագիր Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ (մասնավորապես՝ հոդվածներ 7 և 16): Վերջինս, հանդիսանալով Կազմակերպության ազատ կամահայտնության արդյունք, ըստ էության հավասարազոր է Հաճախորդի կողմից անվերապահորեն և գրավոր ձևով Հաշտարարի որոշումներին համաձայնելուն, այսինքն՝ այդ դեպքում կողմերը կամավոր սահմանափակում են ՀՀ

Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածներով սահմանված իրենց իրավունքների լիարժեք իրացման հնարավորությունը: Ելնելով վերոգրյալից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ Կազմակերպությունը Հաշտարարի գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով, այսինքն՝ իր ազատ կամահայտնությամբ, հրաժարվում է Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, օրենքով սահմանված հիմքերով Հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը վիճարկելու սահմանափակ հնարավորություն նախատեսելն իրավաչափ է և սահմանադրականության խնդիր չի հարուցում: Իսկ այն դեպքում, երբ առկա չէ հիշյալ գրավոր համաձայնագիրը, Հաշտարարի որոշումներն իրավասու դատարան վիճարկելու հիմքերի սահմանափակումը՝ այնքանով, որքանով չի նախատեսում այդ որոշումները դատական կարգով ըստ էության վիճարկելու հնարավորություն, իրավաչափ չէ և հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 18 և 19–րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացման արգելափակմանը: Իսկ մարդու և քաղաքացու հիշյալ իրավունքներն ու ազատությունները, ինչպես և սահմանված է ՀՀ Սահմանադրության 42.1–րդ հոդվածով, տարածվում են իրավաբանական անձանց վրա՝ այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ»:

Թիվ ՄԴՈ-1051 որոշումը կայացվել է 09.10.2012 թվականին, այսինքն՝ 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու որևէ իրավակարգավորում նախատեսված չլինելու պայմաններում: «Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը» բովանդակող (գլուխ 50, հոդվածներ 337-340) 09.04.2018 թվականին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին ուժի մեջ մտնելու հետ միաժամանակ ««Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-117-Ն օրենքի 2-րդ հոդվածով «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը փոփոխվել է. «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը «կարող են» բառերից հետո լրացվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով» բառերով՝ արդյունքում ստանալով հետևյալ խմբագրությունը. «Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը կողմերը կարող են

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վիճարկել իրավասու դատարան ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացնելու միջոցով»։ Իսկ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասը՝ որպես հատուկ նորմ, նախատեսում է Ֆինանսական համակարգի հաշտարարի համապատասխան որոշումը չեղյալ ճանաչելու մասին դիմումի քննության սահմաններ՝ դատարանին վերապահելով միայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքով նախատեսված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը պարզելու և համապատասխանաբար որոշում կայացնելու հնարավորություն։

Եվ չնայած այն հանգամանքին, որ 17.06.1998 թվականին ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները դատական կարգով վիճարկելու մասին դրույթի բացակայության պայմաններում է ընդունվել թիվ ՄԴՈ-1051 որոշումը, այնուհանդերձ, նշված որոշման վերլուծության տրամաբանությունից բխում է, որ երբ կազմակերպությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով, այսինքն՝ իր ազատ կամահայտնությամբ, հրաժարվում է Հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից, օրենքով սահմանված հիմքերով Հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը վիճարկելու սահմանափակ հնարավորություն նախատեսելն իրավաչափ է և սահմանադրականության խնդիր չի հարուցում։ Իսկ այն դեպքում, երբ առկա չէ հիշյալ գրավոր համաձայնագիրը, Հաշտարարի որոշումները վիճարկելու հիմքերի սահմանափակումն իրավաչափ չէ և հանգեցնում է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված իրավունքների իրացման արգելափակմանը։ Դատական պաշտպանության իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է տվյալ դեպքում կազմակերպության իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը։ Անձի/կազմակերպության՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս։ Իսկ օրեցօր զարգացող հասարակական, քաղաքացիաիրավական հարաբերությունների պայմաններում այնպիսի համակարգային կարևորություն ունեցող մարմնի, ինչպիսի Ֆինանսական համակարգի

հաշտարարն է, որոշումները դատական կարգով քննելու սահմանափակումը ընդամենը 3 հիմքի շրջանակներում, որոնք չեն նախատեսում Հաշտարարի որոշման իրավաչափության ըստ էության քննություն, էապես խաթարում է արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունքները: Նման սահմանափակում պետք է նախատեսվի միայն կողմի և Հաշտարարի միջև կնքված գրավոր համաձայնագրի, այսինքն՝ անձի ազատ կամահայտնության շրջանակներում, մնացած բոլոր դեպքերում Հաշտարարի որոշումների իրավաչափությունը անհրաժեշտ է քննել ըստ էության՝ չխաթարելով անձանց/կազմակերպությունների՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունքները: Հակառակ պարագայում արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացումը դառնում է ոչ մատչելի և թերի, չի բխում իրեն իրավական հոչակած պետության և ժողովրդավարական հասարակության նպատակներից: Ելնելով անձի՝ դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, անհրաժեշտ է նախադրյալներ ամրագրել դրանց երաշխավորման ու ապահովման համար: Համապատասխան կարգավորման բացակայության պայմաններում լիարժեք չի կարող երաշխավորվել արդարադատության մատչելիության՝ անձի իրավունքն այն բովանդակությամբ, որն անմիջականորեն բխում է ինչպես Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների, այնպես էլ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստից:

Վերոգրյալի լույսի ներքո՝ հարկ ենք համարում նշել նաև, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի 17-րդ հոդվածը ևս ենթակա է վերանայման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 339-րդ հոդվածի 5-րդ մասի և «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան